

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1897 հունվար 28 Ռուսաստանում առաջին անգամ կատարվեց ընդհանուր մարդահամար, որի արդյունքները հրապարակվեցին 1905թ.-ին:

մարտ 13 Կարսում ծնվեց հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ և քննադատ Եղիշե Չարենցը: (Վախճ. 1937թ.-ին):

մայիս 18 Ծնվեց հայ դերասան Գուրգեն Ջանիբեկյանը: (Վախճ. 1978թ.-ին):

հունիս 2 Ցարական Պետական խորհրդի որոշումը հայկական եկեղեցական-ծխական բոլոր դպրոցները լուսավորության նախարարությունը ենթարկելու մասին: Որոշմանը չենթարկվելու պատճառով այդ դպրոցները փակվեցին:

օգոստոս 10 Դաշնակցականները կազմակերպեցին «Խանասորի արշավանքը»:

հոկտեմբեր 10 Թուրքական կառավարության կարգադրությամբ փակվեցին Թուրքիայում հրատարակվող հայ պարբերականների զգալի մասը:

դեկտեմբեր 2 Չարդախլու գյուղում ծնվեց ականավոր զորավար Խորհրդային Միության մարշալ Յուլիաննես Բաղդամյանը: (Վախճ. 1982թ.-ին):

1898 մարտ 10 Մահացավ հայ ականավոր կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանը: (Ծնվ. 1836թ.-ին):

մարտ 17 Ռուսաստանի նախարարների կոմիտեն հատուկ որոշում կայացրեց հայկական դպրոցներին պատկանող գույքը պետական իշխանությունների տնօրինությանը հանձնելու մասին:

սեպտեմբեր 10 Գերմանիայում մահացավ նշանավոր գիտնական Անդրեաս Արծրունին: (Ծնվ. 1847թ.-ին):

նոյեմբեր 10 Փարիզում լույս է տեսնում «Անահիտ» ամսագիրը Արշակ Չոբանյանի խմբագրությամբ:

1899 հունվար 1 Շահագործման հանձնվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը:

մարտ 9 Վախճանվեց գրական-հասարակական գործիչ Պետրոս Շանշյանը: (Ծնվ. 1819թ.-ին):

հուլիս 15 Ավարտվեց Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարությունը:

օգոստոս 20 Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Ստեփանավան ստեղծվեց Հայաստանի առաջին մարքսիստական խմբակը:

նոյեմբեր 1 Մահացավ ազգային ազատագրական շարժումների նշանավոր գործիչ Սերոբ Աղբյուրը (Սերոբ Վարդանյան):

1900 մայիս 2 Թեոդոսիայում վախճանվեց աշխարհահռչակ ծովանկարիչ Յուլիաննես Այվազովսկին: (Ծնվ. 1817թ.-ին):

դեկտեմբեր 3 Փարիզում ֆրանսերեն լույս տեսավ «Pro Armenia» երկշաբաթաթերթը:

դեկտեմբեր 24 Գերմանիայի Լայպցիգ քաղաքում լույս տեսավ «Իսկրա» թերթի առաջին համարը Վ. Ի. Լենինի խմբագրությամբ:

1901 հունվար 2 Մահացավ մանկավարժ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ, վիպասան Մաթեոս Մամուրյանը: (Ծնվ. 1830թ.-ին):

հունվար 3 Մահացավ արևմտահայ վիպագիր Սրբուհի Տյուսաբը: (Ծնվ. 1842 թ.-ին):

փետրվար 23 Մահացավ արևմտահայ հրապարակախոս Ստեփան Ոսկանյանը: (Ծնվ. 1825 թ.):

մայիս 1 Ցարական կառավարությունը օրենք հրատարակեց «Անդրկովկասի պետական հողերում բնակվող գյուղացիների հողաշինարարության գլխավոր հիմունքների մասին»:

հունիս 12 Ցարական կառավարության օրենքով Անդրկովկասում վերացվեցին ծխահարկն ու հողահարկը, մտցվեց պետական բահրային տուրքը:

հոկտեմբեր 2 Ծնվեց հայ խմբավար, մանկավարժ, երաժշտագետ հասարակական գործիչ Թաթուլ Ալթունյանը:

նոյեմբեր 1 Արևմտյան

Հայաստանում Անդրանիկ ջուկատի և թուրքական կանոնավոր զորամասերի միջև տեղի ունեցավ Առաքելոց վանքի կռիվը:

նոյեմբեր 9 Վենետիկում

վախճանվեց հայագետ Ղևոնդ Ալիշանը: (Ծնվ. 1820թ.-ին):

1901 դեկտեմբեր 10 Ռիգայում տեղի ունեցավ Ռուսաստանի հայ ուսանողների համագումար, որտեղ Ստ. Շահումյանը ղեկավարում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատական խումբը:

դեկտեմբեր 13 Բացվեց Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղագիծը:

1902 փետրվար 21 Մահացավ հայագետ Ալեքսանդր Երիցյանը: (Ծնվ. 1841թ.-ին):

մարտ 2 Ստեփան Շահումյանը գլխավորեց Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողության խոշոր դասադուլը, որի պատճառով հեռացվեց ինստիտուտից և արտաքսվեց Կովկաս:

մարտ 27 Վախճանվեց Քրիստափոր Կարա-Մուրզան: (Ծնվ. 1853թ.-ին):

ապրիլ 10 Հիմնադրվեց Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերությունը:

հուլիս 4 Բրյուսելում կայացավ միջազգային կոնֆերանս հօգուտ Հայկական հարցի արդարացի լուծման:

հուլիս 9 Վիեննայում մահացավ հայագետ Արսեն Այտընյանը: (Ծնվ. 1825թ.-ին):



(Շարունակելի)

Լուրեր

Իրան

«ԻՐԱՆԻ ՀԵՏ ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՓԱԶԱՆՑ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ»



Իրանի ռադիոյի հարցազրույցը Ստ. Դեմիրճյանի հետ

- Պրն Դեմիրճյան, դուք առաջին անգամ եք այցելել Իրան:

- Սա իմ առաջին այցն է Իրանի Իսլամական Հանրապետություն: Այցը մի քանի անգամ տարբեր պատճառներով հետաձգվել էր, այս այցը համարում եմ շատ արդյունավետ: Հանդիպեցինք մի շարք պատասխանատու անձանց հետ: Այցը ճանաչողական էր, քննարկեցինք հայ-իրանական հարաբերությունները, որոնք չափազանց կարելուում ենք: Իրապես հայ-իրանական հարաբերություններն ունեն մեծ նշանակություն, եւ մենք պիտի անենք ամեն բան անրապակելու այս բարեկամությունն ու խորացնելու համագործակցությունը:

- Բանակցությունների կապակցությամբ եթե կան բացատրություններ, խնդրեմ ներկայացրեք:

- Գաղտնիքներ չկան: Քննարկում ենք Հայաստան-Իրան հարաբերությունները եւ նկատեցինք, որ Իրանի պաշտոնատարները եւս կարելուում են այդ հարաբերություններն ու պատրաստ են ընդլայնելու: Այսօր համագործակցության դրական փաստեր ունենք, բայց, ինչ խոսք, ավելին կարելի է անել:

- Այսինքն դրական վերած եք նկատում Հայաստան-Իրան հարաբերություններում, հատկապես Խաթամիի Հայաստան կատարած այցից հետո:

- Այո, Իրանի հետ հարաբերությունները մենք գնահատում ենք նորմալ, բայց համոզված ենք, որ ավելին կարելի է անել հատկապես տնտեսության տեսական համագործակցության բնագավառում:

- Նկատում ենք, որ վերջին շրջանում ԱՄՆ-ը ներթափանցում է տարբեր երկրներ, այդ թվում Իրաք, Աֆղանստան կամ ԱՊՀ երկրներ: Ինչպե՞ս եք գնահատում այդ երեւոյթը:

- Բնականաբար, ամեն մի պետություն ունի իր շահերը: Այսօր շատ դժվարություններ են կուտակված

տարածաշրջանում, բայց մենք հուսով ենք, որ դրանք կկարգավորվեն խաղաղ միջոցներով:

- Որպես օրինակ, այսօր ժողովրդավարություն հաստատելու անվամբ ԱՄՆ-ը հարձակում է գործում տարբեր երկրների վրա, ասենք, Իրաքի: Ձեր կարծիքով, սա ի՞նչ ժողովրդավարություն է:

- Անդրադառնալով Իրաքի հարցին ես պիտի ասեմ, որ չնայած այսօր մենք բոյկոտում ենք խորհրդարանի նիստերը, քանի որ կեղծվեցին թե՛ նախագահական եւ թե՛ խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ու արհամարհվեց սահմանադրական դատարանի որոշումը հանրաքվե անցկացնելու մասին, սակայն Ազգային ժողովում Իրաքի հարցի քննարկմանը մասնակցեցինք եւ դեմ քվեարկեցինք՝ հաշվի առնելով հատկապես սփյուռքի գործոնը, քանի որ բազմաթիվ դիմումներ կային սփյուռքից, հատկապես իրաքահայությունից, որպեսզի Հայաստանը չգնա նման քայլի: Հայաստանը պետք է լավ հարաբերություններ ունենա ԱՄՆ-ի, նաեւ բարիդրացիական հարաբերություններ իր հարեւանների հետ, եւ այդ առումով չափազանց կարելուոր են մեր հարաբերությունները Իրանի հետ: Տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար շատ կարելուոր են Հայաստան-Իրան հարաբերությունները: Պետք է ամեն ինչ անենք այդ հարաբերություններն էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու համար: Հայաստանը պիտի շարժվի Եվրոմիությանն ինտեգրվելու ուղիով եւ միեւնույն ժամանակ պետք է լավ հարաբերություններ ունենա ԱՄՆ-ի հետ: Մենք չպիտի մոռանանք այն օժանդակությունները, որ ԱՄՆ-ը ցուցաբերել է Հայաստանին եւ մենք գնահատում ենք:

- Թե՛ որպես ընդդիմություն եւ թե՛ որպես խորհրդարանի պատգամավոր ինչպե՞ս եք գնահատում ԼՂ ներկա զարգացումները:

- Այսօր ընդունվում են մի շարք ոչ հայանպաստ բանաձեւեր: Մենք բազմիցս նշել ենք, որ առանց դարաբաղյան կողմի մասնակցության դարաբաղյան խաղաղության բանակցությունները հեռանկար չունեն, քանի որ որեւէ պարտադրված որոշում չի կարող խաղաղություն հաստատել տարածաշրջանում: Այսինքն՝ Ղարաբաղը պիտի դառնա բանակցային գործընթացի ակտիվ մասնակից, եւ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը չի կարող անտեսվել: Ցավոք, այսօր հարցը միջազգային հանրությունն ընկալում է որպես Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքային վեճ: Ես նախագահական ընտրությունների ժամանակ նշում էի այդ մասին, իսկ մյուս թեկնածուն հակադրվում էր այդ գաղափարին: Բայց այսօր Հայաստանի իշխանությունները նույնն են նշում, որ Ղարաբաղը պետք է դառնա բանակցային գործընթացի մասնակից:

- Վերջում, եթե ունեք հավելյալ բացատրություններ, խնդրեմ ներկայացրեք:

- Ուզում են ողջունել մեր հայրենակիցներին: Ես տեսա, որ Իրանի պաշտոնատարներն անտարբեր չեն հայ մշակութային արժեքների պահպանման նկատմամբ: Հուսով եմ, որ սա իմ վերջին այցը չի լինի: Կրկին

կայացվենք եւ ավելի շատ շփումներ կունենանք: Գիտենք, թե ինչ ներդրում ունի Իրանի կյանքում հայ համայնքը եւ գիտենք, թե ինչ է արել հայ համայնքն Իրանի ու Հայաստանի հարաբերությունների համար:

Հայաստան

ԼԵՀԱՍԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ, 19 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Լեհաստանի Սեյմն այսօր ընդունել է Հայոց ցեղասպանությունը: Լեհաստանում ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանի խոսքերով, Լեհաստանի խորհրդարանը միաձայն ընդունել է հայտարարություն, որով դատապարտում է Հայոց ցեղասպանությունը Օսմանյան թուրքիայում:

Ընդունված հայտարարության մեջ նշվում է, որ Սեյմը հարգանքի տուրք է մատուցում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքիայում հայ բնակչության նկատմամբ կատարված ցեղասպանության զոհերի հիշատակին: Նշվում է, որ այդ ոճրագործության զոհերի հիշատակը հարգելն ու հանցագործությունը դատապարտելը ողջ մարդկության, պետությունների ու բարի կամքի տեր մարդկանց բարոյական պարտականությունն է:

Հայտարարության նախագիծը մեկ ամիս առաջ երկու ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների կողմից հանձնվել է Սեյմի նախագահին: Նախագիծը նախօրեին կայացած քննարկումներից հետո, այսօր դրվել է քվեարկության եւ միաձայն ընդունվել:

ՆՅՈՒ ՋԵՐՍԻ ՆԱՀԱՆԳԸ ՃԱՆԱԶԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկայի հայկական համագումարի հաղորդմամբ, Մ. Նահանգների Նյու Ջերսի նահանգի գլխավոր ասամբլեան միաձայն ընդունել է 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեռ: Միաժամանակ նահանգի կրթության հանձնաժողովը հաստատել է Հայոց ցեղասպանության համակողմանի ուսումնասիրման ծրագրերը:

«Այս բանաձեռը ճանաչում է Հայոց ցեղասպանության 90-ամյակը եւ հայերի նկատմամբ օսմանյան կայսրության հանցավոր վարքագիծը համարում է միջազգային եւ պատմական նշանակության հարց», ասվում է փաստաթղթում:

Ցեղասպանության ուսումնասիրման ծրագրով Նյու Ջերսի նահանգի միջնակարգ դպրոցներին եւ քոլեջներին կբաժանվի «Հանցագործություններ ընդդեմ մարդկության եւ քաղաքակրթության. Հայոց ցեղասպանություն» գիրքը:

Գերմանիայի Բունդեսթագը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեռը

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Գերմանիայի Բունդեսթագում այսօր միաձայն ընդունվել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեռը: Գերմանիայում ՀՀ դեսպան Կարինե Ղազինյանը ԱՐՄԵՆԴՐԵՍԻ թղթակցի հետ հեռախոսազրույցում ողջունելի եւ նշանակալի համարեց այս քայլը, հատկապես այն դեպքում, երբ Բունդեսթագի վաղաժամ ընտրություններ են հայտարարված, եւ խորհրդարանականները չուզեցին իրենց աշխատանքը կիսատ թողնել ու այս Բունդեսթագի գործունեության ընթացքում ավարտեցին սկսված գործընթացը:

Միաձայն անցնելը դեսպանը հետաքրքիր համարեց, նշելով, որ նախապես իրեն ասվել էր, որ բոլոր կուսակցությունները կոնսենսուսի են եկել: ««Ցեղասպանություն» բառը որպես մեջբերում է օգտագործված, կուզենայի նշել, որ գերմաններն «բնաջնջում» բառն իշխում է տեքստում, որը շատ բարձր հնչողություն ունի: Բայց Բունդեսթագի նպատակը Հայոց ցեղասպանության իրողությանն իրավական սահմանում տալը չէր (իրենք հենց այդպես էլ նշում են, որ դա իրողություն է, կասկած չունեն), այլ հաշտեցումը երկու ժողովուրդների միջեւ: Նպատակն էր ցույց տալ թուրքիային, որ անհրաժեշտ է եվրոպական պատմական հիշողության մշակույթը ձեւավորել իրենց մեջ, եթե ուզում են եվրոպական ընտանիքի անդամ դառնալ, եւ ցույց տալ թուրքիային, որ անհրաժեշտ է Հայաստանի հետ սահմանները բացել ու դիվանագիտական հարաբերություններ հաստատել», -նշեց դեսպանը:

4. Ղազինյանի խոսքերով, գերմանացի խորհրդարանականներն այս քայլը համարում են իսկապես արդեն ցեղասպանության ճանաչում, բայց հայ համայնքի ներկայացուցիչները, կարծում են, որ դա բավական չէ, հենց ցեղասպանություն բառը պետք է օգտագործվի: Դեսպանը նշեց, որ փաստաթղթում հստակորեն նկարագրված են 1915թ. արհավիրքները, գրեմանացիները ներողություն են խնդրում Կայսերական Գերմանիայի՝ այն ժամանակ Օսմանյան կայսրության հետ համագործության համար: Նշվում է, որ նրանք խոնարհվում են միլիոնավոր զոհերի հիշատակի առաջ, եւ իսկապես ներողություն են հայցում, որպես Օսմանյան կայսրության դաշնակիցներ: «Կարծում են, որ սա նաեւ ինչ-որ մի ձեւ է թուրքիային հասկացնելու, որ Գերմանիան թե շուրջստն է ընդունել, եւ նույնիսկ ընդունում է Օսմանյան թուրքիայի հետ համագործակցության մեղքը եւ ներողություն խնդրում ու սրանով փորձում է ցույց տալ, որ անհարժեշտ է, որ թուրքիան էլ ի վերջո հասնի այդ գաղափարին, քանի որ պետք է ընդունել պատմությունն ու անցնել առաջ: Հնարավոր չէ անվերջ սահմանը փակ պահել եւ երկխոսություն չունենենալ միայնաց հետ», -նշեց դեսպանը:

Փաստաթղթի ընդունումը նա կարելու քայլ համարեց մի երկրում, որտեղ ամենամեծ թուրքական համայնքն է: 4. Ղազինյանը նշեց նաեւ, որ կիրակի օրը թուրքերը մեծ, 50 հազարանոց բողոքի ցույց են հայտարարել եւ պատրաստվում են հավաքվել Բեռլինի կենտրոնական պողոտաներից մեկում: «Սա մեծ վրդովնում է առաջացրել նաեւ թուրքիայի պետական շրջաններում: Գնումը շատ մեծ էր Բունդեսթագի վրա եւ անհրաժեշտ է գնահատել այս քայլը», -նկատեց դեսպանը:

4. Օսկանյան. «Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բունդեսբազի որոշումը շրջադարձային է»

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԻՐԱԿԱՆ ԱՆՑԱԹՈՒՂԹ ԴԵՊԻ ԵՐԿՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

ԵՐԵՎԱՆ, 16 ՅՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: «Հայաստանը դրական է գնահատում Բունդեսբազի կողմից ընդունված բանաձեռը: Այն կարելի է քայլ է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Թեև բանաձեռը չի օգտագործում «ցեղասպանություն» տերմինը, քանի որ Բունդեսբազն իրեն իրավասություն չի վերապահում որակավորում տալ 1915թ. դեպքերին, սակայն «ցեղասպանություն» բառն առկա է նկարագրական մասում, իսկ որոշման մասում այդ ողբերգական իրադարձությունների վերաբերյալ կիրառում է «հայոց բնաջնջում» տերմինը», - ԱՐՄԵՆԴՐԵՄԻ խնդրամքով անդրադառնալով Բունդեսբազի՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ այսօր ընդունած բանաձեռին, ասաց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գերմանիան տարիներ շարունակ խուսափում էր այդ մասին խոսել եւ ավելի շուտ հակված էր լուծյան կամ ժխտման, Բունդեսբազի որոշումը շրջադարձային է: Հատկապես, որ Գերմանիան ընդունում է իր մեղսակցությունը 1915թ. ողբերգական իրադարձություններին եւ կոչ անում Թուրքիային հաշտվել իր անցյալի հետ», - նշեց Վ. Օսկանյանը, ավելացնելով, որ Բունդեսբազի որոշումը եւս մեկ կարելի է քայլ է Թուրքիայի ԵՄ անդամակցության կապակցությամբ հայկական հարցերը առաջիկա աշնանը նախատեսվող բանակցությունների օրակարգում ընդգրկելու առումով:

Գերմանիայի կառավարությունը հավասարակշռված է համարում Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բունդեսբազի ընդունած բանաձեռը

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Գերմանիայի կառավարության խոսնակ Թոմաս Շտեգն, անդրադառնալով Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բունդեսբազի ընդունած բանաձեռի կապակցությամբ Թուրքիայի իշխանությունների հակազդեցությանը, նշել է, որ այդ երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից բանաձեռին տրված «սխալ եւ տգեղ» բնորոշումը լրջագույն բացթողում է, քանի որ որոշումը հավասարակշռված բնույթ է կրում:

Ինչ վերաբերում է Էրդողանի այն արտահայտությանը, թե Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը դեմ էր այդ որոշմանը եւ անձամբ Էրդողանին հավաստել է այն մասին, թե կհսում է Թուրքիայում 20-րդ դարասկզբին հայերի նկատմամբ տեղի ունեցածի վերաբերյալ Էրդողանի դիրքորոշումը, եւս ճիշտ չէ:

«Գերմանիան շատ լավ է հասկանում, թե որքան կարելի է պատմական պատասխանատվությունն ստանձնելու եւ պատմության մութ էջերին ամերեսվելու կարելիությունը խաղաղ ապագա կառուցելու համար», - հայտարարել է Թ. Շտեգը:



ԿԻՄ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ, Ստեփանակերտ

ԼՂՀ խորհրդարանական ընտրությունները կայացան՝ արձանագրելով դրանց ակնկալվող ազատությունն ու թափանցիկությունը: Այս մասին արտահայտվեցին նաեւ իրենք՝ միջազգային դիտորդները, նշելով, որ այս ընտրությունները ԼՂՀ-ի համար եւս մի կարելի է քայլ են ժողովրդավարության ճանապարհին: Մինչ վկայաբերելը դիտորդական խմբերի կարծիքները ընտրությունների վերաբերյալ, նշեց, որ «Ընտրություններ-2005»-ի առանձնահատկություններից մեկը ընտրողների աննախադեպ ակտիվությունն էր: Եթե 2000 թ. ԼՂՀ ԱԺ ընտրությունների ժամանակ 85.866 ընտրողներից քվեարկությանը մասնակցել էին շուրջ 31 հազար հոգի, ապա այս անգամ 89.576 ընտրողներից, նախնական տվյալներով, քվեարկությանը մասնակցել են 66.794 հոգի (մոտ 78%): Դիտորդները ընտրությունների ավարտից հետո կազմակերպված մամուլի ասուլիսների ժամանակ հատկանշում էին այս փաստը, ընդգծելով այն մեծ հերթերը, որոնք գոյացել էին ընտրական տեղամասերում: Ընդ որում, ընտրողների այդ կուտակումները բնավ էլ չեն խախտել քվեարկությունների հանգիստ ռիթմը: Ընտրությունների ամենամեծ անակնկալը թերեւս հենց դրանց արդյունքն էր: Վերլուծաբանների ենթադրությունները հիմնականում չարդարացան, որովհետեւ ներուճակ համարվող «ՀՅԴ - Շարժում-88» դաշինքը մեծամասնական ընտրակարգում բացարձակապես ձախողվեց ոչ մի պատգամավորական մանդատ չստանալով: Դրա փոխարեն անսպասելի արդյունքներ ապահովեց «Ազատ հայրենիք»-ը՝ ԱԺ-ի հետ հավասարապես ստանալով 7 պատգամավորական տեղ ապագա խորհրդարանում: Մյուս 8 ընտրատարածքներում հաղթել էին անկախ թեկնածուները: Ակնկալվում է, որ 4-րդ գումարման ԱԺ-ում նրանց մի մասը համալրելու է նշված երկու խմբակցությունների շարքերը: Թերեւս բացառություն է կազմելու անկախ պատգամավոր Արմեն Աբգարյանը, որը Արցախում առավելապես հայտնի է Ամուլյա մականունով: Նա միեւնույն ժամանակ հայտնի է որպես նախկին սամվելբաբայանական, որի հետ քաղաքական ասպարեզից հեռացել էր 2000 թ. մարտի 22-ի ահաբեկչության կապակցությամբ:

Համամասնական ընտրակարգում արդյունքները ակնկալելի էին ԱԺԿ-ն ստացավ 5 տեղ, իսկ «Ազատ հայրենիք» ու «ՀՀԴ -Շարժում-88» դաշինքը՝ 3-ական: Այսպիսով, եթե հետագայում անկախ պատգամավորների հաշվին խորհրդարանական խմբակցությունները չաճեն, ապա ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի դասավորությունը կլինի այսպես՝ «Արցախի ժողովրդավարական կուսակցություն»՝ 12, «Ազատ հայրենիք»՝ 10, «ՀՀԴ -Շարժում-88»՝ 3 եւ անկախ պատգամավորներ՝ 8:

Ընտրությունների վերաբերյալ դիտորդների գնահատականները հիմնականում դրական էին: Մամուլի ասուլիսների ժամանակ նրանց բնութագրությունները փաստում էին Լեռնային Ղարաբաղում ժողովրդի կամարտահայտության ազատ դրվածքը, որը շահեկան կարող է լինել հակամարտության կարգավորման ճիշտ տարբերակների հետագա որոնումներում: ԼՂՀ-ում ստեղծվել է ինքնակառավարման ուժեղ համակարգ, որը կարող է դրական դեր կատարել դարաբաղյան հիմնախնդրի բանակցություններում, նշեցին նրանք: Ամերիկացի դիտորդները մասնավորապես կարեւորեցին այն փաստը, որ զորամասերում զինվորները քվեարկել են համամասնական, իսկ պայմանագրային ծառայողներն ու սպաները՝ նաեւ մեծամասնական ընտրակարգերով:

Կոնստանտին Ջատուլինը (ՌԴ) նույնիսկ նշեց, որ ժողովրդավարության առումով ԼՂՀ-ում դրվածքը մի քանի անգամ ավելի բարձր է, քան հարեւան երկրներում, առանձնապես՝ Ադրբեյջանում, որն այդպես էլ չի ուզում ԼՂՀ անկախությունը ճանաչել: Որոշ դիտորդներ, որոնք մասնակցել էին նաեւ 2002 թ. ԼՂՀ նախագահական ընտրություններին, նշեցին, որ ժողովրդավարությունը Ղարաբաղում ներկայումս ավելի ամուր հիմքերի վրա է, քան եղել է 2-3 տարի առաջ:

Խորվաթ իրավապաշտպան Ջորան Պուզիչի կարծիքով՝ դարաբաղյան ընտրությունները լիարժեք ազատ ու արդար էին, եւ այս դրվածքով դրանք ոչնչով չեն զիջում քաղաքական այն միջոցառումներին, որոնք ինքը դիտարկել է բալկանյան երկրներում: Առհասարակ նկատված խախտումներն ու թերությունները տեխնիկական բնույթի էին, որոնք դիտորդների տեսակետով բնութագրական են նաեւ եվրոպական երկրներին:

Ընտրությունների վերջնական արդյունքները ԿԸՀ-ն պետք է հրապարակի 6 օր հետո, սակայն նախնական տվյալները հազիվ թե էական փոփոխության ենթարկվեն ամփոփիչ փաստաթղթում: Բնականաբար, ընտրությունների արդյունքներից դժգոհ է «ՀՀԴ-Շարժում-88» դաշինքը, որի ներկայացուցիչները, ԿԸՀ նախագահ Սերգեյ Նասիբյանի տեղեկատվական ելույթից շուրջ մեկ ժամ հետո, լրագրողների ու դիտորդների առաջ հանդես եկան հայտարարությամբ, որով նրանք ոչ արդար ու թափանցիկ են ճանաչում հունիսի 19-ի ԼՂՀ խորհրդարանական ընտրությունները: Գլխավոր պատճառաբանումը իշխանությունների վարչական ռեսուրսների օգտագործումն է: Նրանց այս փաստարկմանը լրագրողները հարց ուղղեցին արդյոք դաշինքն օգտագործել է իր վարչական ռեսուրսները, որոնք նա նույնպես ունի: Հիշեցնենք, որ Ստեփանակերտի քաղաքապետը դաշինքի մաս կազմող «Շարժում-88»-ի առաջնորդն է: Պատասխանը կոնկրետ չէր՝ դաշինքը փորձել է հնարավորինս արդար եւ ազնիվ մասնակցել ընտրություններին: Լրագրողներին նաեւ զարմացրել էր դաշինքի հայտարարության

բովանդակությունը, քանի որ քվեարկության օրը տարբեր լրատվամիջոցներով, այդ թվում՝ Արցախի հանրային հեռուստատեսությամբ, ընտրատեղամասերում գտնվող դաշինքի ներկայացուցիչները բազմիցս հայտարարել էին, թե քվեարկությունն ընթանում է արդար ու թափանցիկ, եւ իրենք ոչ մի բողոք չունեն: Վերոհիշյալ հայտարարությունը լրագրողներին ներկայացրած ՀՀԴ ներկայացուցիչ Արմեն Սարգսյանը եւ «Շարժում-88»-ի փոխնախագահ Գեղամ Բաղդասարյանը խոստացան այդ հարցի պատասխանը եւս ընդգրկել նախապատրաստվող հայտարարության մեջ, որն ըստ նրանց՝ հանրությանը կներկայացվի առաջիկայում: Նրանք չբացառեցին այն հավանականությունը, որ դաշինքը կարող է հրաժարվել իրենց 3 մանդատներից:

Ազատության համար պայքարող Արցախը հունիսի 19-ի խորհրդարանական ընտրություններով վերահաստատեց ժողովրդավարությանը հավատարիմ մնալու իր որդեգրած դիրքորոշումը: Ինչպես դիտորդներից մեկն է իրավամբ նշել՝ եթե երկիրը ընտրել է ժողովրդավարության ուղին եւ դա ապացուցում է համաժողովրդական քվեարկությամբ, ապա այդ երկրի ձգտումները պետք է միջազգային հանրությունը գնահատի: Հուսանք, որ այս ընտրությունները իրական անցաթուղթ կդառնան դեպի ԼՂՀ-ի միջազգային ճանաչում:

ԼՂՀ խորհրդարանական ընտրություններում առավել մեծ թվով ձայներ է ստացել «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը»

ՍՏԵՓԱՆԱՎԵՐՏ, 20 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդած նախնական տվյալներով, հունիսի 19-ին կայացած խորհրդարանական ընտրություններին մասնակցել է ընտրողների 78 տոկոսը (կամ 66 հազ. 774): Համամասնական ընտրակարգով ամենամեծ թվով ձայներ է ստացել «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը» (նախագահ՝ Աշոտ Ղուլյան)՝ 22 393, երկրորդը՝ «Ազատ հայրենիք»՝ 15 931, եւ «ՀՀԴ-Շարժում-88»՝ դաշինքը՝ 14 534: Համաձայն ԼՂՀ օրենսդրության, խորհրդարանում նրանք կստանան համապատասխանաբար 5,3,3 տեղ:

Մեծամասնական ընտրակարգով ընտրվել են ըստ ընտրատարածքների՝ Արմեն Աբգարյանը, Ժաննա Գալստյանը, Վալերի Հարությունյանը, Արայիկ Հարությունյանը, Մաքսիմ Միրզոյանը, Արարատ Ղանիբեյանը, Սերգեյ Սեյրանյանը, Գագիկ Պետրոսյանը, Սամվել Հակոբյանը, Բենիկ Բախշիյանը, Իվան Ավանեսյանը, Արմեն Օհանյանը, Ռուդիկ Հյուսնունցը, Ռուդիկ Մարտիրոսյանը, Սեյրան Օհանյանը, Գրիգորի Գասպարյանը, Գառնիկ Միրզաբեկյանը, Արթուր Թովմասյանը, Օլեգ Գրիգորյանը, Վահրամ Աթանեսյանը, Արծվիկ Սազայանը, Կարեն Գրիգորյանը: Նրանցից 7-ը պաշտոնապես առաջադրվել են «Արցախի ժողովրդավարական կուսակցության» կողմից, 7-ը՝ «Ազատ հայրենիքից»: Ընտրությունների վերջնական արդյունքները կհրապարակվեն 5-6 օրից:

ԼՂՅ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ՁԵՎԱՎՈՐՎԵԼ Է

Երեկ ԼՂՅ ԿԸՀ-ում ընտրատարածքային հանձնաժողովների նախագահները կազմեցին եւ ստորագրեցին հունիսի 19-ի ընտրությունների համամասնական ընտրակարգի ամփոփիչ արձանագրությունը: Հանձնաժողովների նախագահները համակարծիք էին այն հարցում, որ ընտրությունները եղել են ազատ եւ թափանցիկ: Որոշ նկատառումներ արտահայտվեցին քվեարկության կազմակերպման պայմանների վերաբերյալ: Մասնավորապես հանձնաժողովների նախագահների մի մասը բողոքեց որոշ ընտրատեղամասերի անհարմարավետությունից: Այդ կապակցությամբ առաջարկվեց, որ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ընտրությունների օրը սպասարկի հազարից ոչ ավելի ընտրողի, այլապես կուտակումներն անխուսափելի են լինելու: Եղավ նաեւ առաջարկ հանձնաժողովների անդամների վարձատրության վերաբերյալ, ըստ որի վարձատրությունը պետք է կատարել ընտրողների թվին համամասնորեն: Արձանագրությանը կցվեց նաեւ ԿԸՀ-ի՝ ՀՀԳ-ական երկու անդամների կարծիքը: Նրանց համոզմամբ՝ ընտրությունների նախօրյակին ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ընտրողները չէին կարողանում արտահայտել սեփական համակրանքը, ինչն էլ իր ազդեցությունն է ունեցել ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

Նույն օրը նորընտիր պատգամավորներին հանձնվեցին մանդատները:

Ըստ ամփոփիչ փաստաթղթի՝ համամասնական ընտրակարգով 89 հազար 121 ընտրողից ընտրություններին մասնակցել է 66 հազար 974-ը: Անվավեր է ճանաչվել 5 հազար 257 քվեաթերթիկ, 1186 ընտրող նշում է կատարել «Բոլորին դեմ եմ» տողում, 6 կուսակցությունից եւ մեկ դաշինքից խորհրդարան անցել են «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը», որը ստացել է 22 հազար 709 քվե, «Ազատ հայրենիք» կուսակցությունը, որը ստացել է 15 հազար 960 քվե եւ «ՀՀԳ-Շարժում-88» դաշինքը, որը ստացել է 14 հազար 850 քվե: Խորհրդարանում համամասնական 11 տեղերից 5-ը զբաղեցնելու են ԱԺԿ-ի, 3-ը՝ «Ազատ հայրենիքի» եւ 3-ը՝ դաշինքի անդամները:

Ընտրությունների արդյունքներով, ԿԸՀ-ն որոշում է ընդունել համամասնական ընտրակարգով ԼՂՅ ԱԺ պատգամավոր ընտրված համարել եւ պատգամավոր գրանցել, ԱԺԿ-ից՝ Աշոտ Դուլյանին, Անդրանիկ Սարգսյանին, Լյուդմիլա Բարսեղյանին, Յուրի Հայրապետյանին եւ Գարիկ Գրիգորյանին: «Ազատ հայրենիքից», ըստ ցուցակի, մանդատ են ստացել Արպատ Ավանեսյանը, Ռամելա Դադայանը եւ Հովիկ Ջիվանյանը: Դաշինքում, քանի որ ցուցակով երրորդը գրանցված էդուարդ Աղաբեկյանը իր տեղը զիջել է հաջորդին, պատգամավորական հետեւյալ կազմն է ընտրվել՝ Արմեն Սարգսյան, Վիտալի Բալասանյան եւ Գեղամ Բաղդասարյան: Այս երեքն էլ չէին անցել մեծամասնական ընտրակարգով:

ԱԺԿ-ի համամասնական ցուցակում եւս փոփոխություն է կատարվել՝ ըստ հերթականության ցուցակով ընտրված Սվետլանա Խաչատրյանին խորհրդարանում փոխարինելու է Գարիկ Գրիգորյանը:

Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից 5-ը նախորդ գումարման պատգամավորներ են: Նախորդ գումարումից 2 հոգի խորհրդարան են անցել Արցախի ժողովրդավարական կուսակցության համամասնական ցուցակով:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, Ստեփանակերտ

Ամերիկացի դիտորդները ԼՂ-ի ընտրությունները որակում են որպես ազատ եւ թափանցիկ

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Լեռնային Ղարաբաղում հունիսի 19-ին տեղի ունեցած ընտրությունները ԱՄՆ-ից ժամանած Հանրային միջազգային իրավունքի եւ քաղաքականության խմբի դիտորդական առաքելությունը որակում է «ազատ եւ թափանցիկ»:

Այդ մասին այսօր Երեւանում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ հայտարարեց այդ հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ջեյմ Խուփերը: Նա տեղեկացրեց, որ իրենց խումբը դիտորդական առաքելություն է իրականացրել ԼՂՀ-ի 22 ընտրատարածքներում եւ 37 տեղամասերում:


«Հունիսի 19-ի ընտրությունները ազատ եւ թափանցիկ էին: Ընտրական օրենսգրքի փոփոխությունները, որ իրականացրել էր ԿԸՀ-ն, ժողովրդավարական ասպարեզ բացեցին քաղաքական կուսակցությունների համար:

Ընդհանուր առմամբ, ԼՂՀ-ում զարգացումները դառնում են ավելի ժողովրդավարական: Ընտրողների եւ պաշտոնյաների դրսևորած վարքագծին ընտրությունների օրը հետեւելով՝ արձանագրում ենք, որ ԼՂ-ն զգալի առաջընթաց է արձանագրել ժողովրդավարության կայացման առումով եւ հույս ունենք, որ այնտեղ կայուն ժողովրդավարություն կարձանագրվի»,- ասաց Ջեյմս Խուփերը՝ ավելացնելով, որ ընտրական գործընթացի ժամանակ իրենք որևէ ճնշում, լուրջ անկարգություն չեն նկատել: Նա նշեց նաեւ, որ եղել են աննշան թերություններ, որոնք առնչվել են ընտրացուցակներին:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպիսի համեմատություն կարող է լինել Ղարաբաղում եւ Ադրբեջանում ժողովրդավար ընտրությունների անցկացման միջեւ, դիտորդական խմբի անդամները նախ նկատեցին, որ, չնայած չեն եղել Ադրբեջանում, բայց որոշ տեղեկություններ ունեն ընտրությունների վերաբերյալ:

«Եթե նման համեմատություն արվեր, Ղարաբաղի դիրքերն ավելի ամուր կլինեին, որովհետեւ ԼՂ-ն կարող է ցույց տալ, որ առաջընթաց է ապրել եւ ավելի ժողովրդավարական երկիր է: Մենք ողջունում ենք մրցակցությունը այս տարածաշրջանում, բայց ուրախ կլինեինք, որ եթե նմանօրինակ մրցակցություն լինի, մրցեին, թե ով է ավելի ժողովրդավար, քան թե ով ավելի լավ զինուժ ունի»,- ասաց Ջ. Խուփերը:

ՎԵՐԱԿԱՆԳՆԿՈՒՄ Է ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ



Այդ մասին հունիսի 24-ի համարում Վանից տեղեկացրել է թուրքական «Ռադիկալ» թերթը: Համաձայն թերթի, Աղթամար կղզու Սբ. Խաչ եկեղեցին վերականգնող շինարարական ընկերության ղեկավար Ջահիթ Ձեյդանլըն նշել է. «Վերականգնման աշխատանքներում մասնագիտացած հայ ճարտարապետ նշանակելու համար հանդիպել ենք Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի հետ: Ինքն ինձ առաջարկեց Ջաքարիա Միլդանօղլուին: Հայ ճարտարապետը կմասնակցի աշխատանքների ողջ ընթացքին»: Ձեյդանլըն միաժամանակ նշել է, որ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Աթիլլա Քոչը եւ Վանի նահանգապետ Նիզա֊ի Թանըլըրը հավանություն են տալիս վերականգնման աշխատանքներին հայ ճարտարապետի մասնակցությամբ:

Այնուհետեւ նա ավելացրել է. «Մեր նպատակը եկեղեցին նախնական տեսքին համապատասխան վերանորոգելն է: Այդ հարցում չափազանց բժախնդիր ենք: Ենթադրում ենք, որ վերականգնման աշխատանքները կավարտվեն 2006 թ. վերջին: Այդ աշխատանքներում մեզ օգնելու համար Իտալիայից գիտնական ենք հրավիրել: Օգտագործելու ենք հատուկ կիր: Եկեղեցու քարերի ուսումնասիրությունը կատարվում է արտասահմանում: Թող բոլորն անհոգ լինեն»:

Մեր հերթին ավելացնենք, որ Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու վերականգնումը ոչ միայն խոստացել եւ անձամբ մշակույթի եւ զբոսաշրջության նախարարին կարգադրել էր վարչապետ Էրդողանը, այլեւ առաջարկել էր նաեւ վերականգնման աշխատանքներին հայ ճարտարապետի ներգրավումը:

ՄՈՆԻՒԱԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐՈՒԵՍՏԻ ՄՐՑՈՅԹԻ ՀԱՅԱԶԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

2005 թուականին մայիսի 10-20-ը կայացած Մոնրեալի միջազգային երգարուեստի մրցոյթը երաժշտասեր հասարակութեան համար եղաւ անջնջելի ապրում մը: Աշխարհի չորս ծագերէն 33 տարիքը չբոլորած 190 երիտասարդ երգիչներէն ընտրուած 43 բարձր մակարդակի մրցորդներ ելոյթ ունեցան խստապահանջ դասական յայտագրով մը, որմէ 12 ամենատաղանդաւորները անցան աւարտական հանգրուանին:

Ընտրակազմը ինքնին կը ներկայացնէր պատկառելի աշխարհահռչակ երգիչներ, ներկայիս ուսուցիչներ դարձած, ինչպէս Կառլո Բերգոզի, Շերլի Վերթ, Ժոզեֆ Ռուլո, Թոմ Քրաուզ եւ այլն, որոնց ներկայութիւնը ինքնին կը նշանակէր ամենաբարձր մակարդակի երգարուեստի մրցոյթ մը: Առիթը ունեցայ ներկայ գտնուելու կիսաւարտական ելոյթներուն եւ Կառլո Բերգոզիի Մաստեր Քլասսին, ուր մեծ վարպետը յայտարարեց, թէ Մոնրեալի միջազգային երգարուեստի մրցոյթը աշխարհի ամենաբարձր մակարդակի մրցանքներէն մէկն է իր կազմակերպութեամբ, կարգապահութեամբ, մասնակիցներու որակով եւ այլն:

Մեծ ուրախութեամբ կարդացինք անունները երկու հայուհիներու՝ Քրիստինա Դովլաթեան (29-ամեայ) եւ Աննա Կասեան (23-ամեայ), որոնք նախնական գտումէն յետոյ Մոնրեալ հրաւիրուեցան մասնակցելու կիսաւարտական հանգրուանին:

Մրցոյթի բոլոր մասնակիցները պարտաւոր էին ներկայանալ կիսաւարտական բաժնին մէջ քնարերգական եւ օպերատիք 5 ստեղծագործութիւններով՝ դաշնամուրի ընկերակցութեամբ, եւ աւարտական բաժնին մէջ՝ 5 տարբեր ստեղծագործութիւններով, նուազախումբի ընկերակցութեամբ:

Ռուսաստան ծնած Քրիստինա Դովլաթեան, վկայեալ Երեւանի Կոմիտասի անվ. երաժշտանոցէն, 2000-ին շահած է առաջնութիւնը հանրապետական մրցոյթին եւ յաջորդ տարին եղած է մրցանակակիր երիտասարդ ռուս երգիչներու մրցոյթին: Գլխաւոր դերեր վերցուցած է Երեւանի մէջ Վերդիի «Աիդա» եւ Պուլչինիի «Մադամ Բաթերֆլայ» օպերաներուն մէջ: Սոպրանօ Քրիստինա Դովլաթեան մեզ տպաւորեց իր ջերմ եւ հաստատօրէն կազմուած ձայնով, ինքնավստահ բեմականութեամբ, զօրեղ

մեկնաբանութեամբ, ինչպէս նաեւ երաժշտական խորունկ զգացական արտայայտութեամբ:

Հայազգի Աննա Կասեան ծնած է Թիֆլիս՝ երաժշտական ընտանիքէ եւ իր երաժշտական ուսումը սկսած է դաշնամուրի եւ ջութակի դասերով, 2001-ին կ'որոշէ հետեւիլ երգարուեստի ճիւղին Թիֆլիսի պետական երաժշտանոցին մէջ: Յաջորդ երկու տարիներուն մասնակցած է 50-է աւելի համերգներու, ստանձնելով գլխաւոր դերեր, ինչպէս Ջիլլա Վերդիի «Ռիգոլէտո»-էն, Լորին Դոնիձեթիի՝ «Դոն Պասկուալէ»-էն, Դեսպինա՝ Մոցարտի «Կոզի ֆան թութի»-էն եւ այլն: Այժմ Աննան իր մասնագիտութիւնը կը շարունակէ Փարիզի «Conservatoire National Superieur de Musique et de Danse»-ին մէջ: 2004-ին առաջին մրցանակակիրը եղած է International Autumn Symphony Competition-ին, իսկ 2005-ին պատուակալ մրցանակակիր 12-րդ European Music Competition-ին Picardie-ի մէջ: Աննան ցուցաբերեց ամբողջական օպերայի երգչուհիի մը յատկութիւնները իր ելոյթներուն մէջ, ըլլան անոնք դաշնամուրի կամ նուագախումբի ընկերակցութեամբ: Ունի բացարձակ կարողութիւն տիրապետելու իր ծայնային ելեւէջները՝ թաւ կամ բարձր, մեղմ կամ հզօր: Մեկնաբանութիւնները շատ զգայուն եւ հաղորդակից են ծայնային նրբերանգութեամբ: Երգեցողութիւնը հարազատ՝ երգահանի պահանջներուն, եւ ինչպէս ժւորիի անդամներեն մէկը արտայայտուած է՝ «Աննան երգի ամէն մէկ ոտքը երգեց առանց բացառութեան»: Աննայի աւարտական ելոյթը նուագախումբի հետ խլեց ներկաներու յոտնկայս ծափահարութիւնները, այս բարձրորակ մրցաշարքին հանդիսանալով 4-րդ լաւագոյն մրցանակի դափնեկիրը: Այս մրցոյթին առաջնութիւնը շահեցաւ տաղանդաւոր սոպրանո 32-ամեայ կորեացի Սին-Նյուգ Յվանգը իր բացառիկ կատարողութեամբ:

Քանի մը երաժշտասէր հայեր, որոնք մոտէն հետեւեցան այս մրցոյթին, հոգեկան մեծ բաւարարութեամբ բաժնուեցան այն յոյսով, որ մօտ ապագային միջազգային երգարուեստի մէջ պիտի յայտնուին նոր աստղեր, ներառեալ հայազգի սոխակներ, որոնք շատ հաւանաբար պիտի ծաղկեցնեն աշխարհի օպերայի մեծագոյն բեմերը:

ԿԱՐՕ ՆՇԱՆԵԱՆ, Սոնրտալ

ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՅՔԷՋՈ

Հայաստանի նկարիչների միության անդամներին ինտերնետային կայքէջը նոր հնարավորություններ է տալիս սեփական ստեղծագործություններն առավել ճանաչելի ու տարածելի դարձնելու առումով: Կայքէջը ներկայացնում է նկարիչների միությունը սկսած հիմնադրումից (1932 թ.), տեղեկացնում 73 տարիների ստեղծագործական միության ընթացքի գլխավոր իրադարձություններին ընդհանուր

գծերով: Միության կայքէջում 1200 անդամներից առաջին ութունն են ընդգրկված: Նկարիչների միության ինտերնետային էջը բացում է հայ արդի գեղանկարչության նահապետը՝ 90-ամյա Էդվարդ Իսաբեկյանը: Ընդգրկված են տարբեր ժանրերի (գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն) ստեղծագործող հեղինակների լուսանկարներով, կենսագրական եւ ստեղծագործական տեղեկություններով, չորսական աշխատանքների ներկայացմամբ: Կայքէջի մի առանձին բաժին տեղեկացնում է նկարիչների միությունում տեղի ունեցող նորությունների, կազմակերպված ցուցահանդեսների մասին:

Կայքէջի ստեղծման աշխատանքները շարունակվելու են միության մնացած բոլոր անդամների՝ հետագա ընդգրկման ծրագրով: Armenianartists.com կայքէջը հայ այցելուին ժամանակակից գեղանկարչության մասին ընդհանուր պատկերացման լավ հնարավորություն է տալիս անգլերենով, այստեղ բացակայում է հայերեն թեկուզ խորհրդանշական որեւէ բառ: Մինչդեռ ցանկալի է նաեւ անհրաժեշտ հայերեն տեքստի զուգահեռ ներկայությունը:

ՖՐԵՂԵՐԻԿ ԲԱԼԸՔՋՅԱՆԻ ԱՈԱԶԻՆ ՖԻԼՄԸ

Ֆրանսահայ երիտասարդ կինոռեժիսորիչ Ֆրեղերիկ Բալըքջյանը թողարկել է իր առաջին ֆիլմը, որն արդեն ցուցադրվում է փարիզյան էկրանների վրա: «Անագնիվ խաղ» անունը կրող ֆիլմի գործողությունները ծավալվում են մայրաքաղաքի կենտրոնում գտնվող Սանտիե թաղամասում: «Աշխարհ» թերթի մեկնաբանի բնորոշմամբ, սկզբնամասի տեսարաններից հանդիսատեսն այն տպավորությունն է ստանում, թե ինքը վավերագրական ֆիլմ է դիտում:

Սկզբնամասում բավական դանդաղ ծավալվող գործողությունները հետզհետե արագանում են: Թաղամասի հայերի դերերում հանդես են գալիս Պասկալ Էլբեն, Սիմոն Աբգարյանը եւ Ժերալդ Փափազյանը: Նրանք ֆիլմում մանր մաֆիականներ են, որոնք բախվում են չինացի մաֆիականների հետ: Բնականաբար, առկա են բռնության բազմաթիվ տեսարաններ, որոնք հետեւանք են ոչ միայն գործարքների, այլեւ զգացմունքների: Գործողությունների արագ ռիթմը մշտական լարվածության մեջ է պահում հանդիսատեսին: Ժապավենը փոքր-ինչ հիշեցնում է մաֆիայի վերաբերյալ Սկորսեզեի եւ Զիմինոյի նկարահանած ֆիլմերը եւ, որպէս երիտասարդ կինոռեժիսորիչի առաջին գործ, կարող է բնութագրվել իբրեւ հաջողված աշխատանք: